

**«ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐԸ» ԱՍՈՒՄ Է
ՅՈՒՎ ԱՊԵՆԱՊԵՏ ՅԱՐՈՒՅԹՈՒՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԸ**

Երեկ, ժամը 17.20-ի սահմաններում Երվանդ Քոչարի 19 հասցեում գտնվող «Քեթրին» խանութից դուրս գալու պահին հարձակման է ենթարկվել ՅՈՒՎ ատենապետ Յարություն Առաքելյանը:

Միջադեպից երկու ժամ անց, «Փակագծի» հետ ունեցած գրույցում Յարություն Առաքելյանը փոխանցեց, որ խանութից 5 մետր հեռավորության վրա երկու անծանոթ երիտասարդներ՝ մարզական կառուցվածքով, մինչև աչքերը իջնող սպորտային սեւ գլխարկներով, դեմքերը՝ կիսով չափ փակ, ընդառաջ են եկել իրեն աջ եւ ձախ կողմերից, ասես, ճանապարհ տալու մտադրությամբ ու անակնկալ հարձակում գործել: Ոչ մի բառ չեն արտաբերել, ճարպկորեն բաճկոնը քաշել, ծածկել են գլուխն ու հրել-գցել գետնին: Իրեն չկորցնելով՝ ՅՈՒՎ ատենապետը, որ տարիներ առաջ բռնցքամարտիկ է եղել, դիմել է ինքնապաշտպանության, անգամ ընկած վիճակում կարողացել է հարվածներ տեղալ մեկի ոտքերին, իսկ երբ դիմացի խանութից դուրս են թռել նաեւ միջադեպի ականատես հաճախորդներն ու աշխատակիցները, հարձակվողներն անմիջապես դիմել են փախուստի: «Քեթրին» խանութի աշխատակիցներից մեզ հաջողվեց ճշտել, որ երկու անծանոթները մոտ երկու ժամ «պահակություն» են արել կուսակցության գրասենյակի մատույցներում, իսկ փախուստի դիմելուց հետո նստել են քիչ հեռու իրենց սպասող BMW մակնիշի սեւ ավտոմեքենան ու պոկվել տեղից: Կատարվածի մասին կուսակցության գրասենյակն անմիջապես տեղյակ է պահել Սպանդարյանի ոստիկանական բաժանմունք եւ ստացել օպերատիվ արձագանք: Այժմ ոստիկանության աշխատակիցներն զբաղված են միջադեպի մանրամասների ճշտմամբ: Ինքը՝ Յարություն Առաքելյանն ասաց, որ կճանաչի հարձակվողներին, իսկ մեր այն հարցին էլ, թե ի՞նչ տեսք ունեին, ասաց «անթրաշ գեղցու»:

Դժվար չէ կռահել, որ այս պատահարի ետեւում ստույգ պատվիրատուներ կան (չի բացառվում երրորդ ուժի մասնակցությունը), քանզի, երբ քաղաքական ուժի ղեկավարն է օրվա ամենապիկ ժամին ենթարկվում բիրտ հարձակման, ուրեմն, ինչ-որ մեկին կամ ոմանց դա խիստ անհրաժեշտ է: Եվ այդ «ինչ-որ մեկն» էլ հաստատ քաղաքականությունից ու քաղաքական գործիչներից հեռու «մանյակ» չէ, ում պարզապես հաճույք է պատճառում «ծեծող բրիգադներ» պահել եւ օրվա տարբեր ժամերին ու քաղաքի տարբեր հատվածներում ցուցադրական տուրուղմփոցներ սարքել: Այստեղ, բնականաբար, գործ ունենք լուրջ պատվիրատուի հետ եւ Յարություն Առաքելյանի հետ մեր գրույցի ընթացքում էլ փորձեցինք պարզել, թե անձամբ ինքն ո՞ւմ կասկածում:

-Ի՞նչ շարժառիթ կարող էր ունենալ Ձեր դեմ իրականացված այս հարձակումը, պրն Առաքելյան:

-Անձնական թշնամիներ կյանքում չեն ունեցել եւ կոնկրետ այս պահին էլ որեւէ մեկին չեն կասկածում, ընդամենն այս ամենը կապում են իմ մասնագիտական գործունեության հետ:

-Քաղաքակա՞ն գործունեությունը նկատի ունեք:

-Քաղաքական կամ քաղաքական-անձնական:

-Դուք նաև տնտեսական գործունեությամբ եք զբաղվում, ունեք սեփական բիզնես: Գուցե, ա՞յս ոլորտում եք ինչ-որ մեկի «թանհն թթու ասել»:

-Իհարկե, ոչ: Նախ ունեմ շատ փոքրիկ բիզնես: Սեւանում տարածք եմ վարձակալել, որն ավելի շատ ծառայում է դարձյալ մեր կուսակցությանը, Սփյուռքի մեր երիտասարդների բանակումներին, այն էլ տարվա մեջ ընդամենը չորս ամիս:

-Կարո՞ղ եք ենթադրել, որ միջադեպի շարժառիթը Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի հրապարակավ «համբալ» անվանելն էր:

-Չեմ կարծում: Նրանք ծոխ սիրտ ունեն: Ավելի շուտ սա երրորդ կողմի կազմակերպածը կարող է լինել: Երեւի, դուրը եկել է, ուզում է, որ ես շարունակեմ այս ոճը:

-Ինչ-որ մեկն ուզում է Ձեզ եւ Աբրահամյանի եղբայրներին ռիսերիմ թշնամիներ՞ը դարձնել:

-Չեմ կարող ասել՝ ինչ են ուզում, ինչ չեն ուզում, բայց մամուլով հայտարարում եմ, որ ընդունում եմ մարտահրավերը: Չեմ թաքցնում նաև, որ ինձ վրա հարձակվողներին տեղը-տեղին հայիոյել եմ, հիմա էլ այդ հայիոյանքների տասնապատիկն ուղարկում եմ պատվիրատուների հասցեով: Այնպես որ, համեցեք:

-Երբ ասւմ եք՝ «երրորդ կողմ», ո՞ւմ նկատի ունեք: Գուցե, ՀՈԱԿ նախկին ատենապետ Ռուբեն Միրզախանյանի՞ն:

-Ո՞չ: Իհարկե, ո՛չ: Իսկ պարզելն արդեն մամուլի գործն է: Կարող եք լրագրողական հետաքննություն անցկացնել կամ դրա նման մի բան: Անձամբ ես չեմ կարծում, թե «ղզիկները» կարող են նման չակերտավոր միջոցառումներ կազմակերպել: Սա ավելի շուտ անլուրջ մարդկանց կազմակերպած անլուրջ մի բան է, եւ ես էլ պատահածին շատ լուրջ չեմ վերաբերվում: Ուղղակի, ընդունում եմ որպես նախազգուշացում: Ես էլ իրենց եմ մամուլով նախազգուշացնում, որ ընդունված է մարտահրավերը: Ինձ մոտիկից ճանաչողները շատ լավ գիտեն, որ վախի զգացումը շատ վաղուց եմ հաղթահարել:

-Հնարավո՞ր է, որ սա նախընտրական «ռազբորկաների» շրջանակում պատվիրված հարձակում լինի:

-Նման ենթադրություններից ես հիմա կուզեի խուսափել, որովհետեւ կարծում եմ, որ ժամանակն ամեն ինչ կճշտի ու կդնի իր տեղը: Միայն նորից եմ ուզում կրկնել, որ ինքս ինձ համար արդեն որոշել եմ եւ հետդարձի ճանապարհ էլ չունեմ: Ես իմ գործունեությունը շարունակելու եմ, Կենտրոն համայնքի 9-րդ ընտրատեղամասում մեծամասնականով առաջադրվելու եմ 2007-ի մայիսին: Որեւէ փոփոխություն, այս իմաստով, իմ քաղաքական ծրագրերում չկա եւ չի լինելու:

-Նույն ընտրատեղամասում իրենց թեկնածությունն առաջադրել պատրաստվող Ձեր հավանական թեկնածուների հետ ինչպիսի՞ հարաբերությունների մեջ եք:

-Կան կուսակցությունների ղեկավարներ, որոնց հետ ես հանդիպում եմ, եւ որոնք արդենիսկ հայտարարել են , թե աջակցելու են ինձ, կան նաեւ այնպիսիները, ովքեր չեն թաքցրել, որ իմ դեմ իրենց թեկնածուն են առաջադրելու:

-Անուններ չե՞ք ուզում նշել:

-Այս պահին նպատակահարմար չեմ համարում դրա մասին խոսել:

ԼԻԼԻ ՄԱՐՏՈՅԱՆ